ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 հունվարի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

9
(2859)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ. ԹՎԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2023 թվականի 1000 խոշոր հարկատուների ցանկը:

Ըստ այդ ցուցակի՝ առաջին 5 հարկատուներն են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ը՝ 70?8 մլրդ դրամ մուտքերով, «Գրանդ Տոբակո»-ն՝ 55 մլրդ 286 մլն դրամ, «Գազպրոմ Արմենիան»-ն՝ 48?5 մլրդ դրամ, «Մոբայլ Սենթր Արթ»-ը՝46?1 մլրդ դրամ, «Ֆրիթի Ուեյ»՝33?2 մլրդ դրամ, «Վայլդբերրիզ»-ը՝26 մլրդ 492 մլն դրամ:

2023 թվականի տարեկան տվյալներով՝ հանրապետության խոշորագույն հարկատուն շարունակում է մնալ հանքարդյունաբերող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ը (ԶՊՄԿ): Կոմբինատի տարեկան հարկերի եւ տուրքերի վճարը, նախորդ տարվա համեմատ, նվազել է: 2022 թվականին այն կազմել է 44 մլրդ դրամ, որը 2021 թվականի համեմատ՝ աճել էր 2.3 անգամ:

1000 խոշոր հարկ վճարողների ցանկի երկրորդ հորիզոնականում «Գրանդ Տոբակո»-ն է, որի 2023 թվականի հարկերը, 2022 թվականի հարկերի հետ համեմատ, աճել են 2 մլրդ դրամով:

«Գազպրոմ Արմենիա»-ն արդեն տեւական ժամանակ է՝ մնում է 1000 խոշոր հարկատուների առաջատարների ցանկում:

Հետաքրքիր փաստն այն է, որ «Գազպրոմ Արմենիա»-ն տարեցտարի նվազեցնում է հարկերը. այս տարի երկրորդ հորիզոնականը զիջել է «Գրանդ Տոբակո»-ին: Նախորդ տարի «Գազպրոմ Արմենիա»-ի հարկերը կազմել էին 52 մլրդ դրամ՝ այս տարի նվազելով գրեթե 4 մլրդ դրամով:

2022 թվականին նույն ցանկի 6-րդ հորիզոնականում գտնվող «Մոբայլ Սենթր Արթ»-ը, որը Mobile Centre բջջային հեռախոսների խանութների ցանցն է, 2023 թվականին զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը: 2022 թվականին այն եղել է 40-րդ հորիզոնականում, 2022 թվականին ընկերության հարկերը քառապատկվել էր՝ վճարելով 17.6 մլրդ դրամ:

«Ֆրիթի Ուեյ»-ը նախորդ տարի 22-րդ հորիզոնականում էր՝ 8 մլդ 520 հազար դրամ տարեկան հարկային մուտքերով: Ընկերության հարկային աճը նկատելի էր դեռ 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում, հենց այսպես էլ այն 22-րդ հորիզոնականից բարձրացավ 5-րդ հորիզոնական: Բարձրանալով 17 հորիզոնական՝ ընկերության հարկերի եւ տուրքերի վճարը աճել է 25 մլդ դրամով: «Ֆրիթի Ուեյ» ՍՊԸ-ն ներկայացնում է Vesta տեխնիկայի վաճառասրահները:

«Վայլդբերրիզ»-ի հարկային մուտքերն ու վճարները սենսացիոն են հայկական շուկայի համար: 2023 թվականի հունվար-դեկտեմբերի հարկերը գրեթե 35 անգամ գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Ինչպես 2022-ին, այնպես էլ 2023-ին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից, ըստ էության, վճարվել է պետական բյուջեի հարկային եկամուտների շուրջ 77 %-ը:

2022-ին պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 1,926 մլրդ դրամ, իսկ 2023-ին՝ 2,221 մլրդ դրամ: 1,926 մլրդ դրամից 1,490 մլրդ դրամը ապահովել են առաջին 1000 խոշոր հարկ վճարողները:

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը նոր նախագիծ է պատրաստվում ներկայացնել ավագանի, որով քաղաքապետարանում պարգեւավճարների տրամադրման ինստիտուտի վերահսկողությունը կանցնի ավագանու անդամներին: Այսինքն՝ քաղաքապետը ոչ թե աշխատակիցներին միանձնյա որոշմամբ պարգեւավճար կտրամադրի, այլ նիստի ժամանակ ավագանու անդամներին հստակ կներկայացվի, թե ինչ հիմնավորմամբ է ցանկանում տվյալ պաշտոնյային պարգեւատրել, եւ նոր միայն ավագանին կհաստատի կամ կչեղարկի այս որոշումը: Նախագիծը քաղաքապետին կներկայացվի կամ առաջարկության տեսքով, կամ էլ որպես իրավական ակտերի նախագիծ, այնուհետեւ կուղարկվի գլխադասային հանձնաժողով, որտեղ դրական եզրակացություն ստանալուց հետո կմտնի նաեւ ավագանու նիստի օրակարգ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանն ասաց՝ այսպիսով ցանկանում են, որ պարգեւավճարների ինստիտուտը քաղաքապետարանում վերանա: «Սիրուն աչքերի համար այլեւս որեւէ մեկին կարիք չկա պարգեւատրել. պետք է բարձրաստիճան չինովնիկը, որը պարգեւավճար է ստանում, արժանանա դրան: Ջեկուցողը, որը կներկայացնի իր ենթակային պարգեւավճարի համար, ավագանու նիստին պետք է տեղեկանք-հիմնավորում ներկայացնի, թե տվյալ պաշտոնյան ինչ աշխատանք է կատարել իր լիազորություններից ավելի, որի համար պետք է արժանանա պարգեւավճարի, ավագանին թող քննարկի ու որոշում կայացնի տվյալ աշխատողին պարգեւավճար տրամադրելու մասով»,- ասաց նա:

Բարձրագույն խորհրդի անդամ Վիգեն Քոչարյանը եւս կլքի ԲԴԽ-ն, սակայն ԲԴԽ-ում հայտնվել են փակուղու առաջ ու փորձում են հասկանալ՝ Վիգեն Քոչարյանը ինչ մասնագետ է, նրան ուղարկեն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական, վարչական, թե քրեական պալատ: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ ԲԴԽ-ում Վիգեն Քոչարյանին հարց ուղղեց, թե ինչու է նա եւս լքում ԲԴԽ-ն ու ցանկանում է դատավոր դառնալ. վերջինս պատասխանեց, թե պարզ չէ: Նշենք, որ ԲԴԽ անդամներից մեկը եւս ցանկանում է լքել ԲԴԽ-ն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար Ազգային ժողովին է առաջարկվել ԲԴԽ-ի 2024 թվականի հունվարի 22-ի որոշումը: Առաջարկվել են Սնանկության դատարանի դատավոր Արթուր Աթաբեկյանի, Երեւան քաղաքի դատավոր Արման Օհանյանի եւ ՀՀ քաղաքացի Գուրգեն Մալխասյանի թեկնածությունները: Ուշագրավն այն է, որ այս թեկնածուներից մեկը Արթուր Աթաբեկյանն է: Իսկ ո՞վ է նա: Արթուր Աթաբեկյանը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահե Ղալումյանի եւ Տավուշի ներկայիս մարզպետ Հայկ Ղալումյանի հորաքրոջ որդին է: Տավուշի մարզպետի դատավոր ազգականը ցանկանում է լքել ԲԴԽ-ն: Ղալումյանը Նիկոլ Փաշինյանի քավորն է: Նրա եղբայր Վահե Ղալումյանն էլ Ազգային ժողովում ՔՊ խմբակցության պատգամավոր է:

ՀՀ նախկին զինդատախազ, ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը կստանա դատախազի կենսաթոշակը: Վարչական դատարանի դատավոր Անի Չիլինգարյանը որոշում է կայացրել: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը 2022 թվականի դեկտեմբերի 27-ին դատարան է ներկայացրել հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ միասնական սոցիալական ծառայության, եւ խնդրել է դատարանին պարտավորեցնել ՀՀ միասնական սոցիալական ծառայությանը ընդունել Գագիկ Վրեժի Ջհանգիրյանին դատախազի կենսաթոշակ նշանակելու մասին որոշումը: Դրանով նա միեւնույն ժամանակ պահանջում է անվավեր ճանաչել ՀՀ միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի՝ 05.12.2022 թվականի գրությունը եւ 04.10.2022 թվականի որոշումը, որով Գագիկ Ջհանգիրյանին կենսաթոշակ չէին նշանակել: Ասել է թե՝ ՀՀ միասնական սոցիալական ծառայությունը հրաժարվել է ԲԴԽ նախկին նախագահին դատախազի կենսաթոշակ նշանակել, եւ նա դատարանով էր փորձում վերականգնել թոշակի իր իրավունքը: Եվ, ահա, 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Վարչական դատարանի դատավոր Անի Չիլինգարյանը վճիռ է կայացրել Գագիկ Վրեժի Ջհանգիրյանի հայցը՝ ընդդեմ Միասնական սոցիալական ծառայության, (երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն) բավարարել՝ - պարտավորեցնել Միասնական սոցիալական ծառայությանը ընդունել Գագիկ Վրեժի Ջհանգիրյանին դատախազի կենսաթոշակ նշանակելու մասին որոշում, - անվավեր ճանաչել Միասնական սոցիալական ծառայության 05.12.2022թ. թիվ 02/ԻՄ/65797-22 գրությունը եւ 04.10.2022թ. կենսաթոշակ նշանակելու որոշումը:

ԶՐՈՒՅՑ

# «ԲՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԵՆ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՌՉԱԿԱԾ ԵՐԿՐՈՒՄ»

**Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանի հետ ArmLur.am-ը զրուցել է նույն խմբակցության անդամ Նարինե Հայրապետյանի առեւանգման աղմկահարույց դեպքի մասին:**

-Տիկին Աղեկյան, վերջին օրերին քաղաքական դաշտում ամենաբուռն քննարկվող թեման Ձեր թիմակցի՝ Նարինե Հայրապետյանի շուրջ տեղի ունեցող իրադարձություններն են: Նա ոստիկանություն դիմում էր ներկայացրել, որ իրեն առեւանգել են, սպառնալիքներ են հնչեցրել իր հասցեին, եւ այդ պատճառով նա ստիպված է եղել լքել երկիրը: Կցանկանամ՝ մանրամասներ հայտնեք, թե Դուք ինչ տեղեկություններ ունեք, եւ արդյոք միջադեպից հետո Ձեզ հաջողվել է կապ հաստատել նրա հետ:

-Շատ ցավալի երեւույթ է տեղի ունեցել. Երեւանի ավագանու անդամ հանդիսացող անձի հանդեպ բռնություն է տեղի ունեցել իրեն դեմոկրատ հռչակած երկրում: Ցանկացած քաղաքացու հանդեպ բռնի ուժի կիրառումը, նրա առեւանգումը, տեւական ժամանակով նրան ազատությունից զրկելը եւ նրա հետ հոխորտալից զրույց ունենալը, բնականաբար, հենց այնպես չեն արվում, եւ մենք հասկանում ենք , որ Նարինե Հայրապետյանը, որը հանդիսանում էր «Մայր Հայաստան» խմբակցության անդամ, կոշտ քննադատություն էր հնչեցնում գործող իշխանության հասցեին, եւ քանի որ գործող իշխանությունը չկարողացավ միանձնյա քաղաքապետ նշանակել այսօր քաղաքապետ աշխատող անձին, իրենց սպասարկող երրորդական խմբակի ղեկավարության հասցեին եւս կոշտ քննադատական վերաբերմունք ուներ եւ այդպիսի ելույթներ էր հնչեցնում: Բնականաբար, ես քանի որ չունեմ հստակ տեղեկություն, թե ում կողմից է կիրառվել այդ բիրտ ուժը, ուղղակի կարող եմ ասել, որ իր քաղաքական գործունեության հետեւանքով այս ամենի ականատեսը մենք եղանք: Հունվարի 15-ի վաղ առավոտյան է տեղի ունեցել դեպքը Նոր Նորքում, դրանից հետո Նարինե Հայրապետյանին ես անձամբ հանդիպել եմ ամսի 16-ին քաղաքապետարանում, եւ արդեն, որքան տեղյակ եմ այդ մասին, նա հաղորդում է տվել, ինչին հաջորդեց երկրից իր փախուստը: Ես՝ որպես ՀՀ քաղաքացի, պահանջում եմ, որ Հայաստանի Հանրապետության այսօրվա գործող իշխանությունը, իրավապահ մարմինները հնարավորինս արագ բացահայտեն բոլոր մեղավորներին, կանչեն նրանց պատասխանատվության, որպեսզի հետագայում նման երեւույթները կանխվեն: Եթե անպատժելիության մթնոլորտ է առաջանում, իսկ այս պարագայում մենք տեսնում ենք, որ դեռեւս չկան մեղավորներ, կալանավորված անձինք, որոնք ոչ միայն ՀՀ քաղաքացու են առեւանգել, այլեւ բարձր քաղաքական պաշտոն զբաղեցնող Երեւանի ավագանու հանդեպ են այդպես վարվել, ինչը կրկնակի վտանգավոր է իրեն ժողովրդավար հռչակած ՀՀ-ում, եւ պատկան բոլոր մարմինները պատասխանատվություն ունեն այս դեպքը բացահայտելու:

**-Իսկ Դուք տեղյա՞կ եք՝ իրավական գործընթացը ինչ փուլում է, քանի որ վերջերս Քննչական կոմիտեն իրադարձությունների մասին հակասող հայտարարություն տարածեց, որ Նարինե Հայրապետյանի կողմից հայց է ներկայացվել, եւ Նարինե Հայրապետյանն ասել է, որ իրեն ոչ ոք չի առեւանգել, ինքը քաղաքական նկրտումներով է նախորդ հայտարարությունը տարածել: Սա ի՞նչ է:**

-Անձամբ զրուցել եմ եւ հստակ գիտակցում էի իրավիճակը, բայց, անկախ իմ վերաբերմունքից, իրավապահ մարմինները պետք է հստակ, ապացույցներով այդ ամենին անդրադառնան, որպեսզի հասարակության համար հստակեցվի, թե ինչ է իրականում տեղի ունեցել: Այս պահին գործը Քննչական կոմիտում է գտնվում, կա քրեական վարույթ, եւ վարույթի շրջանակներում ավելի ճիշտ կլինի, որպեսզի Քննչական կոմիտեն հստակ իրականացնի իր լիազորությունները եւ ասի, թե ինչի հետեւանքով է այդ ցուցմունքը գրվել: Մնացածի առումով պետք է սպասենք իրադարձությունների զարգացմանը: Շատ կարեւոր է բոլոր դեսպանատների վերաբերմունքը այս բռնի ուժի կիրառմանը:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

## ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հրաժարական է տվել: Այդ մասին կառավարության վարչակազմում կայացած ճեպազրույցում հայտարարել է վարչապետ Ղարիբաշվիլին:

«Ցանկանում եմ հանրությանը տեղեկացնել այն որոշման մասին, որը մենք քննարկել ենք թիմի հետ: Այսօր ես լքում եմ վարչապետի պաշտոնը»,- ասել է Իրակլի Ղարիբաշվիլին. գրում է Грузия Online-ը:

Իրակլի Ղարիբաշվիլին առաջին անգամ Վրաստանի վարչապետի պաշտոնը ստանձնել է 2013 թվականին: Նա այս պաշտոնում փոխարինել էր «Վրացական երազանքի» հիմնադիր Բիձինա Իվանիշվիլիին, սակայն հրաժարական էր տվել 2015 թվականի դեկտեմբերի 30-ին: Այնուհետեւ Վրաստանի վարչապետի պաշտոնում Իրակլի Ղարիբաշվիլիին փոխարինել էր Գիորգի Կվիրիկաշվիլին:

Մինչ Վրաստանի կառավարության ղեկավարի պաշտոնը երկրորդ անգամ ստանձնելը Իրակլի Ղարիբաշվիլին գլխավորում էր երկրի պաշտպանության գերատեսչությունը, իսկ երկրորդ անգամ վարչապետի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի փետրվարի 22-ին՝ փոխարինելով Գիորգի Գախարիային:

Ըստ առկա տեղեկությունների՝ Իրակլի Ղարիբաշվիլիին այս անգամ վարչապետի պաշտոնում կփոխարինի իշխող կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն:

## ՀԵՐԹԱԿԱՆ ՖԱՐՍԸ

Տնտեսագետ Տիգրան Մուրադյանը սոցցանցի իր էջում գրել է. «Իշխանությունների լեքսիկոնը թերեւս հասկանում են միայն իրենք, եւ պատահական չէ, որ խաղաղության պայմանագիրը կամ խաչմերուկը մնացել են միջազգային քաղաքական պահանջարկից զուրկ: Իսկ եթե Նիկոլ Փաշինյանի, ճանաչելով Արցախի Հանրապետությունը, հայտնվում է Ադրբեջանի կազմում, ուրեմն վերջինիս չճանաչելու դեպքում պետք է հայտնվի Ադրբեջանի կազմից դուրս:

Բառախաղի վրա կառուցված ՀՀ արտաքին քաղաքականության հերթական ֆարսը Ալմա-Աթայի հռչակագրի հիշատակումն է, որը ոչ միայն վաղուց կորցրել է ուժը, այլեւ վերաբերվում է ԱՊՀ ստեղծմանը եւ ԽՍՀՄ զինված ուժերի հետագա իրավական հարցերին:

***Հ.Գ. Եթե Ալմա-Աթայի պայմանագիրը ունի իրավական ուժ, ուրեմն ՌԴ-ն ճանաչում է Վրաստանի կամ Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը»:***

«ՄԵՂՔԸ ԻՄՆ ԷՐ»

# ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՐԽԻԱՅԻ ԳՆՈՎ

**«2011-2012թթ.-ին, երբ արդեն ակնհայտ էր, որ Նիկոլի միտքը պղտոր է այն առումով, որ նա իր սեփական ամբիցիաները վեր է դնում շարժման նպատակներից, այդ ժամանակ շատ լուրջ քննարկում եղավ նա հետ»,- «ԼուրջCast» հաղորդման ընթացքում ասաց ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբյանը՝ անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ տարիներ առաջ կուսակցության շրջանակներում ունեցած հարաբերություններին:**

«Քննարկվում էր՝ արդյոք պետք է հիմա խզել կապերը Նիկոլ Փաշինյանի հետ, թե փորձել փոխել նրա մոտեցումները: Կային մարդիկ, որոնք կողմ էին առաջին տարբերակին, կային մարդիկ, որոնք երկրորդ տարբերակին էին կողմ, մեղքը իմն էր, ինձ վրա դրվեց այդ հարցը որոշելու խնդիրը: Ինձ ասացին՝ որպես համակարգող դու որոշի՝ գնում ես, Նիկոլին հե՞տ ես բերում, թե՞ խզում ես հարաբերությունները նրա հետ: Ես որոշեցի, որ պետք է այնուամենայնիվ Նիկոլին հետ բերել: 3-ժամանոց խոսակցություն ունեցա նրա հետ ԱԺ-ի այգում, փորձում էի նրան բացատրել իր սխալները, որ կարելի է մի կողմ դնել այդ ամեն ինչը ու միասնական օրակարգով գնալ առաջ:

Այդ խոսակցությունը ինչ-որ ազդեցություն ունեցավ, բայց դա մի քանի շաբաթվա ազդեցություն էր: Դրանից հետո մեզ համար ակնհայտ դարձավ, որ ինքը լրիվ ուրիշ նպատակներ է հետապնդում: Մեզ հետ կապված որեւէ հակասություն նա թաքցնում էր մինչեւ պառլամենտ մտնելը. հիմա հասկանում ենք, որ դա նրան պետք էր պառլամենտ մտնելու համար: Մտնելուց հետո ինքը խզեց մեզ հետ իր հարաբերությունները»,- ասաց Զուրաբյանը:

ՀԱԿ փոխնախագահն անդրադարձավ նաեւ 2008 թվականի իրադարձություններին ու այն հարցադրմանը՝ ինչ կլիներ, եթե տեղի չունենային մարտի մեկի իրադարձությունները:

«Չէր լինի նիկոլիզմի այս մղձավանջը: Մարտիմեկյան իրադարձությունները այնպիսի մեծ ատելություն բերեցին ժողովրդի մեջ հետհոկտեմբեր27յան ռեժիմի նկատմամբ, որ ժողովուրդը պատրաստ էր ցանկացած գին վճարել, այդ թվում՝ հակապետական անարխիայի գնով, միայն թե ազատվի նրանցից:

Ժողովուրդը պատրաստ էր Նիկոլի նման մարդուն բերել իշխանության: Խնդիրն այն էր, որ հայրենասիրությունը, Ղարաբաղը պահելը սկսել էր ասոցացվել թալանի, ռեպրեսիաների հետ: Նիկոլը հակապետական անարխիզմի արտահայտությունն էր, դրա համար եմ ասում՝ եթե մարտի մեկը չլիներ, չէր լինի Նիկոլը»,- ասաց Լեւոն Զուրաբյանը:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ՉԻ ՇԵՂՎԵԼՈՒ ՕՐԱԿԱՐԳԻՑ

«Չեմ կարող չանդրադառնալ նաեւ տարբեր կողմերից եւ, մասնավորապես, Ադրբեջանից հնչող մի շարք ագրեսիվ հայտարարությունների՝ կապված Հայաստանի Հանրապետության բանակի բարեփոխումների, սպառազինության եւ տեխնիկայի ձեռք բերման հետ: Արդեն ասացի, որ ուժեղ եւ մարտունակ բանակ ունենալը յուրաքանչյուր երկրի ինքնիշխան իրավունքն է, եւ որեւէ մեկը չի կարող կասկածի տակ դնել մեր այդ իրավունքը: Եթե որեւէ մեկը կասկածի տակ է դնում մեր այդ իրավունքը, կասկածի տակ է դնում մեր գոյության իրավունքը: Այս պարագայում մեզ այլ բան չի մնա, քան բոլոր հնարավոր եւ անհնար միջոցներով պաշտպանել մեր պետականությունը, մեր անկախությունը, մեր տարածքային ամբողջականությունը»,- հայտարարել է Նիկոլ Փաշինյանը՝ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորման 32-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառման ժամանակ:

«Կրկին արձանագրում եմ, որ, Հայաստանի Հանրապետությունը, իր ինքնիշխան տարածքից բացի, որեւէ այլ տարածքի նկատմամբ հավակնություն չունի, եւ որեւէ մեկը չպետք է հավակնություն ունենա Հայաստանի Հանրապետության որեւէ տարածքի նկատմամբ: Ինչպես ասել եմ, մենք պատրաստ ենք տալ նման երաշխիքներ, երկարատ– եւ անշրջելի երաշխիքներ, բայց նույնպիսի երաշխիքներ ակնկալում ենք ուրիշներից:

Մենք պատրաստ ենք գնալ այդ ճանապարհով, եւ, բացի դա, անվտանգության երաշխիքների մի քանի մեխանիզմներ ենք առաջարկել Ադրբեջանին: Օրինակ՝ զորքերի հայելային հետքաշում Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ ադմինիստրատիվ սահմանի նկատմամբ:

Այդ սահմանը 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրով վեր է ածվել պետական սահմանի, եւ Հայաստանն ու Ադրբեջանը 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում պայմանավորվել են, որ այդ հենքի վրա ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը: Զորքերի հայելային հետքաշումը հնարավորություն կտա, որ ադրբեջանական ԽՍՀ բոլոր տարածքները լինեն Ադրբեջանի, իսկ Հայկական ԽՍՀ բոլոր տարածքները՝ Հայաստանի վերահսկողության ներքո:

Մենք նաեւ սահմանի դեմիլիտարիզացիա, այսինքն՝ ապառազմականացում ենք առաջարկել Ադրբեջանին: Նաեւ սպառազինությունների փոխադարձ վերահսկման մեխանիզմ, նաեւ չհարձակման մասին պայմանագրի ստորագրում, եթե կպարզվի, որ խաղաղության պայմանագրի ստորագրումը սպասվածից ավելի երկար ժամանակ է պահանջելու»,- ասել է Կառավարության ղեկավարը:

Վերջինս ընդգծել է՝ Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է խաղաղության օրակարգին եւ չի շեղվելու այդ օրակարգից:

ՌԵԳԻՈՆԱԼ ԻՐԱՎԻՃԱԿ

# ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀՈՐԴՈՐՈՎ

**Նախօրեին՝ բանակի 32-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ, Նիկոլ Փաշինյանը մի շարք մանրամասներ բացահայտեց, թե հայկական կողմն ինչ առաջարկներ է արել Ադրբեջանին:**

Նա նշեց, որ իրենք անվտանգության երաշխիքների մի քանի մեխանիզմներ են առաջարկել Ադրբեջանին:

«Օրինակ՝ զորքերի հայելային հետքաշում Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ ադմինիստրատիվ սահմանի նկատմամբ: Մենք նաեւ սահմանի դեմիլիտարիզացիա, այսինքն՝ ապառազմականացում ենք առաջարկել Ադրբեջանին: Նաեւ սպառազինությունների փոխադարձ վերահսկման մեխանիզմ, նաեւ չհարձակման մասին պայմանագրի ստորագրում, եթե կպարզվի, որ խաղաղության պայմանագրի ստորագրումը սպասվածից ավելի երկար ժամանակ է պահանջելու»,- հայտարարեց Փաշինյանը:

Նա նաեւ խոսեց երաշխիքների մասին, որոնք ակնկալում է ՀՀ-ն Ադրբեջանից: Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանը, իր ինքնիշխան տարածքից բացի, որեւէ այլ տարածքի նկատմամբ հավակնություն չունի, եւ որեւէ մեկը չպետք է հավակնություն ունենա ՀՀ որեւէ տարածքի նկատմամբ.

«Մենք պատրաստ ենք տալ նման երաշխիքներ, երկարատեւ եւ անշրջելի երաշխիքներ, բայց նույնպիսի երաշխիքներ ակնկալում ենք ուրիշներից»,- հստակեցրեց նա:

Ռուս ռազմական վերլուծաբան Ալեքսանդր Խրամչիխինն ասաց, որ ՀՀ իշխանությունների առաջարկները նոր չեն աշխարհի համար, քանի որ նման որոշ մեխանիզմներ մինչեւ վերջերս գոյություն ունեին Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հարաբերություններում մինչ ուկրաինական զարգացումները:

Նրա խոսքով՝դրանք ըստ էության սառեցվեցին Ուկրաինայում ռազմական գործողությունների եւ Արեւմուտքի հետ արդեն առճակատման նոր փուլի մեկնարկի ֆոնին:

Ըստ Խրամչիխինի՝դա, օրինակ, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ սպառազինությունների կրճատման պայմանագիրն է, որը միտված է միջուկային սպառազինության վերահսկմանը, եւ իրականում հարաբերություններում մի շարք ճգնաժամեր այս պայմանագիրը հաղթահարել է, սակայն վերջին տարիների ընթացքում դա այլեւս չհաջողվեց:

Նա նաեւ չի բացառում, որ այս առաջարկներն արվում են Արեւմուտքի հորդորով, քանի որ ՀՀ-ն ներկայումս ինտենսիվ շփվում է Արեւմուտքի հետ:

«Այնուամենայնիվ, Արեւմուտքում եւս պետք է որ լավ իմանան, որ նման անհավասարակշիռ իրավիճակում այս առաջարկները տեղին չեն, սակայն դրանց բարձրաձայնումը եւս մեկ անգամ շեշտում է ռեգիոնալ բարդ իրավիճակը ու Ադրբեջանի դիրքավորումը, որը եւս, սակայն, Ադրբեջանում կարծես շատ քչերին է հուզում, քանի որ նրանք լրջորեն փորձում են օգտվել աշխարհում ստեղծված իրավիճակից, աշխարհում այսօր քչերին է նաեւ հետաքրքրում Հայաստանն ու Ադրբեջանը. այստեղ արտաքին դերակատարների խնդիրն աշխարհաքաղաքական նոր քարտեզներ ստեղծելն է, դրանց նախկին սահմանները փոխելը»,- ասաց Խրամչիխինը:

Հիշեցնենք, որ իր վերջին հարցազրույցի ընթացքում Իլհամ Ալիեւն անդրադարձել էր նաեւ սահմանից զորքերի հայելային հետքաշման մասին Հայաստանի առաջարկին: Ըստ նրա՝ նման առաջարկություն արել է ոչ միայն Երեւանը, այլեւ մի շարք այլ երկրներ:

«Ինձ մի քանի գործընկերներ խնդրեցին, որ զորքերը հայելային հետ քաշվեն: Ես հարցրեցի՝ո՞ւր: Նրանք ասացին՝ որտեղից եկել են: Ասում եմ՝Բաքվից ենք եկել, Բաքո՞ւ վերադառնանք: Մենք այս տարածքներում չենք եղել արդեն 30 տարի: Եթե այս տարածքները սահման լինեին, եւ Հայաստանը դա ճանաչեր՝որպես սահման, ապա դա կնշեր: Բայց ինքը դա սահման չէր համարում, կարծում էր, որ իր սահմանը Աղդամում է: Հարցիս ոչ ոք չպատասխանեց: Ուստի, մենք ոչ մի տեղ չենք գնա, ոչ մի քայլ չենք շարժվի ո՛չ 2021 թվականի մայիսին, ո՛չ էլ 2022 թվականի սեպտեմբերին գրաված դիրքերից, քանի որ սահմանը պետք է հստակեցվի»,- հայտարարել էր Ալիեւը:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## «ԱՂԵՏԱԼԻ ԽԱՂ ԽԱՂԱՑԻՆ»

«Նոր եւ անվտանգային սպառազինությունների ձեռք բերման ճանապարհով ենք գնում, վերջին տարիներին կառավարությունը մի քանի միլիարդ դոլարի զենք-զինամթերք ձեռք բերելու պայմանագրեր է կնքել»,- ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է հայկական բանակի կազմավորման 32-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ իր խոսքում:

«Պետք է բարձր եւ ուղիղ խոստովանել, որ անվտանգության եւ այդ համակարգերի բանաձեւերի մասին մեզանում եղած պատկերացումները աղետալի խաղ խաղացին մեր գլխին, եւ ՀՀ-ի համար չկա այլ տարբերակ, քան անվտանգային համակարգերի դիվերսիֆիկացումը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մի քանի միլիարդ դոլարի զենք-զինամթերք ձեռք բերելու պայմանագրեր է կնքել:

Հայաստանի ռազմարդյունաբերական համալիրը աննախադեպ՝ մի քանի հարյուր միլիարդ դոլարի պատվեր ունի ՀՀ կառավարությունից»,-նկատեց վարչապետը՝ նշելով, որ աշխատանքները շարունակվելու են, բոլոր հնարավոր ձեւերով պաշտպանվելու են ՀՀ տարածքն ու Հայաստանի անկախությունը, պետականությունը:

## ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հունվարի 29-ին հանդիպել է ԻԻՀ Գերագույն առաջնորդի խորհրդական, արտաքին հարաբերությունների ռազմավարական խորհրդի ղեկավար Քամալ Խարազիի հետ:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ԱԳՆ-ից, զրուցակիցները քննարկել են հայ-իրանական բազմաոլորտ համագործակցության օրակարգին առնչվող տարբեր հարցեր՝արձանագրելով երկու երկրների միջեւ քաղաքական երկխոսության բարձր մակարդակն ու հարաբերությունների զարգացման ակտիվ դինամիկան: Ընդգծվել է այդ նպատակով երկու երկրների միջեւ էներգետիկ, ենթակառուցվածքների, տնտեսական եւ այլ ոլորտներում սերտ փոխգործակցության եւ համատեղ նախագծերի իրականացման կարեւորությունը՝ ի շահ երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման ու տարածաշրջանում կայունության:

Օգտվելով առիթից՝ նախարար Միրզոյանը եւս մեկ անգամ ՀՀ կողմից ցավակցություն է հայտնել տարեսկզբին Քերմանում տեղի ունեցած ահաբեկչական գործողության կապակցությամբ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հարավային Կովկասում անվտանգությանն ու կայունությանն առնչվող հարցերին: Նախարար Միրզոյանը հանգամանալից ներկայացրել է ՀՀ մոտեցումները՝ընդգծելով ՀՀ տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության եւ ինքնիշխանության անվերկբա հարգման հրամայականը՝ նաեւ որպես տարածաշրջանում հարատեւ խաղաղության ապահովման առհավատչյա:

Տարածաշրջանում ենթակառուցվածքների ապաշրջափակման համատեքստում Արարատ Միրզոյանը բարձր է գնահատել ԻԻՀ դրական դիրքորոշումը ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի եւ դրա հիմքում դրված առանցքային սկզբունքների վերաբերյալ:

«ՇԵՖԻ» ՈՐԴՈՒ ԳՈՐԾՈՎ

# ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

**Բարձրագույն դատական խորհուրդը, ճնշելով արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի միջնորդությունը՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գրիգոր Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որոշել է բավարարել այն:**

Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գրիգոր Հովհաննիսյանին հայտարարվել է նախազգուշացում. հայտնում է Բարձրագույն դատական խորհուրդը:

«Դատավորը թույլ էր տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ դատավորը չի հիմնավորել Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումից շեղվելը եւ մինչդատական վարույթն ավարտված լինելու եւ գործով վարույթը Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից ստանձնած լինելու պայմաններում բեկանել է Առաջին ատյանի դատարանի կայացրած ակտը՝ մեղադրյալ նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոխելով տնային կալանքով: Նշված խախտումներն իրենց հերթին հանգեցրել են Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս եւ բոլոր հանգամանքներում դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաեւ դատական իշխանության անկախության եւ անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսեւորելուց զերծ մնալու վերաբերյալ դատավորի վարքագծի կանոնի խախտման:

Միաժամանակ խորհուրդը տեղեկացնում է, որ խորհրդի անդամներ Արշակ Վարդանյանը, Քրիստինե Մկոյանը եւ Էդգար Հովհաննիսյանը դեմ են քվեարկել որոշմանը, Արշակ Վարդանյանն ունի հատուկ կարծիք:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ վերջնական է»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Այս դեպքի վերաբերյալ փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը սոցցանցի իր էջում գրում է.

«ԲԴԽ-ն Նիկոլ Փաշինյանի որդու գործով որոշման համար նախազգուշացում է հայտարարել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գրիգոր Հովհաննիսյանին՝ այն պատճառաբանությամբ, որ Փաշինյանի որդուն «առեւանգողի» նկատմամբ նախաքննության ընթացքում կիրառված խափանման միջոց կալանավորումը տնային կալանքով փոխելիս նա շեղվել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավակարգավորումներից, քանի որ վարույթն այդ պահին ուղարկված է եղել դատարան, թեեւ դատական քննության փուլում դեռեւս անդրադարձ կատարված չի եղել մեղադրյալի խափանման միջոցին:

Մինչդեռ, նույն դատարանի դատավոր Արմեն Դանիելյանը, բեկանելով մինչդատական վարույթում կալանքի մերժման վերաբերյալ դատական ակտը, կալանավորել էր մեղադրյալին, որի վերաբերյալ քրեական գործն արդեն վաղուց դատարան էր ուղարկվել, եւ դատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին: Արմեն Դանիելյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը նույն ԲԴԽ-ն մերժեց այն պայմաններում, որ դատավոր Դանիելյանի արարքում իսկապես կոպիտ խախտում կար, իսկ դատավոր Հովհաննիսյանը նման խախտում թույլ չի տվել: Իսկ գիտե՞ք՝ ինչու ... որովհետեւ Արմեն Դանիելյանը ՀՀ երկրորդ նախագահին կալանավորած, իշխանության սրտի դատավորն է, իսկ Գրիգոր Հովհաննիսյանը՝ ՀՀ լավագույն դատավորներից մեկն է, ով հանդգնել է իրենց «շեֆի» որդու գործով օբյեկտիվ լինել»:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԶԻՆՎՈՐԱԿԱՆԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վարուժան Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, ծառայության մեջ գտնվելով ՀՀ ՊՆ N զորամասում՝ որպես 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ հրաձգային վաշտի կրակային աջակցման դասակի հրամանատար, 2023թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ ՊՆ N զորամասում խոսակցություն է ունեցել նույն զորամասի հրամանատար Գուրգեն Դալլաքյանի հետ զինվորական պարտականությունները կատարելու կապակցությամբ, որը վերածվել է վիճաբանության:

Վ. Սիմոնյանը բռնություն է գործադրել Գ. Դալլաքյանի նկատմամբ՝ աչքերի մեջ փչելու եղանակով կիրառել է արցունքաբեր գազ, հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր հատվածներին, հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ՝ Գ. Դալլաքյանին պատճառելով ֆիզիկական ցավ եւ նվաստացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը ուղարկվել է դատարան:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Ներքին գործերի նախարարության ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունվարի 26-ին Գեղարքունիքի մարզի Կալավան բնակավայրում հայտնաբերվել եւ բաժին է տեղափոխվել 34-ամյա Արմեն Մ.-ն, որը հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի (Ֆիզիկական ներգործությունը) մեղադրանքով:

Նա ներկայացվել է վարույթ իրականացնող մարմին:

Խափանման միջոցը՝ բացակայելու արգելք:

## ԿԱԴՐԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամաններով՝ քրեակատարողական հիմնարկներում կադրային տեղափոխություններ են եղել, ըստ այդմ՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Լաերտ Գրիգորյանը փոխադրման կարգով նշանակվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ:

Արդարադատության գնդապետ Արսեն Արզումանյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել է Արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետ:

Արդարադատության գնդապետ Արտակ Ղազարյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել է «Սեւան» քրեակատարողական հիմնարկի պետ:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետի պարտականությունների ժամանակավոր կատարումը հանձնարարվել է նույն հիմնարկի պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ Վահագն Երանոսյանին:

Արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Ռուբեն Խալապյանը ազատվել է քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՕՊԵՐԱՏԻՎ

## ՉԻ ԴԻՄԱՑԵԼ ՑԱՎԻՆ

Հունվարի 25-ին Մեծամորի Մայիսյան գյուղում աղմկահարույց դանակահարությունը ողբերգական հետեւանքներ է ունեցել:

Մասնավորապես, ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ դանակահարված՝ 1990 թվականին ծնված Մ. Գրիգորյանի հայրը, իմանալով, որ որդին վիճաբանության մեջ է եղել, ու նրան դանակահարել են, վատացել է: Հարազատները մինչեւ դանակահարվածի հորը հասցրել են հիվանդանոց նա մահացել է:

ArmLur.am-ը գրել էր, որ մարտաֆիլմ հիշեցնող վիճաբանություն է եղել Մեծամորի Մայիսյան գյուղում: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ իրավապահների խումբ են ուղարկել գյուղ՝ արյունահեղությունը կանխելու համար:

Ըստ համայնքի բնակիչների՝ գյուղի երկու բնակիչներ վիճել են, ու սկսվել է կռիվ, ինչի ժամանակ 1994 թվականին ծնված երիտասարդը հանել է դանակը ու սկսել անխնա դանակահարել գյուղի 1990 թվականին ծնված բնակչին:

Իրավապահները հասել են դեպքի վայր ու դանակահարվածին շտապ տեղափոխել են հիվանդանոց: Դանակահարողին փնտրում են:

Ի դեպ, վիճաբանողները հարեւաններ են ու նաեւ բարեկամներ:

Ավելին՝ մասնակից են եղել Սգո արարողությանը, որից հետո վիճաբանել են, եւ 1994 թվականին ծնված Հ. Հակոբջանյանը դանակահարել է Մ. Գրիգորյանին:

Գրիգորյանի կյանքին վտանգ չի սպառնում: Նշենք, որ Մարսել Գրիգորյանը դեպքից առաջ սրտի վիրահատության էր ենթարկվել, ու միգուցե նրա հայրը, անհանգստանալով, որ վիրահատած որդուն դանակահարել են, չի դիմացել ցավին ու մահացել է:

Ի դեպ, իրավապահները փնտրում են Հ. Հակոբջանյանին:

## ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ

ArmLur.am-ի խմբագրություն են ահազանգում Արմավիրի բանտի կալանավորներն ու նշում, որ բանտի պատժախուց են տեղափոխում այն կալանավորներին, որոնք պայմանների հետ կապված աղմուկ են բարձրացնում:

Ավելին՝ փնտրում են այն կալանավորին, որը բանտում առկա վիճակի մասով ահազանգել է ArmLur.am-ի խմբագրություն:

Հիշեցնենք, որ երեկ ArmLur.am-ի խմբագրություն է ահազանգել Արմավիրի ՔԿՀ-ի կալանավայրից Աշոտ Հարությունյանը (հարգելի պատճառով անունը փոխված է), որը խնդրում է օգնել Արմավիրի բանտում առկա իրավիճակում:

Վերջինս մեզ հետ զրույցում հայտնեց, որ ՔԿՀ-ում անմարդկային պայմաններ են. «Ջուրը խմելու չի, տառակաները լցվում են մեր բերանները, օդորակիչի մասին բազմիցս բարձրաձայնում են, խեղդվում են, օդ չկա շնչելու: Լավ, մենք մարդ ենք, ո՞նց կարելի է մեզ հետ այսպես վարվել»:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 25-ից 26-ը ՀՀՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 118 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ԴՊՐՈՑԸ՝ ԱՆՄԽԻԹԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բերդավան գյուղի միջնակարգ դպրոցը միշտ աչքի է ընկել իր հաջողություններով, մեդալակիր շրջանավարտներով: Դպրոցն այժմ ունի 402 աշակերտ: Դպրոցի 5 մասնաշենքերը Հայաստանի անկախության տարիներին չեն նորոգվել, պետական բյուջեի ֆինանսավորմամբ լոկ պատուհաններ են փոխվել, «Բերդավան» բարեգործական հիմնադրամի հանգանակած միջոցներով դպրոցի մուտքի մեծ դարպասն է փոխվել, երկու մասնաշենքերը միացնող միջանցքն է նորոգվել, «ԱԿԲԱ» բանկը դպրոցում համակարգչային սենյակ է կահավորել, ՀՕՖ-ը 2 դասասենյակ է նորոգել: Բերդավանի դպրոցի ուսումնական մի մասնաշենքը այժմ ջեռուցվում է վառելափայտով, մյուս մասնաշենքը՝ էլեկտրական հոսանքով: Դպրոցի դասասենյակների պատերի ներկը քայքայված է, առաստաղի սպիտակ մակերեւույթը սեւացած է վառարանների ծխից, դասասենյակների հատակը վատ վիճակում է: Բերդավանի դպրոցն այսպիսի անմխիթար վիճակում է, սահմանի եզրին ապրող աշակերտները տուժում են:

### ԴԻԼԻՋԱՆԸ՝ ՎԵՐՋԻՆ ՏԵՂՈՒՄ

Դիլիջանը Տավուշի մարզի 4 համայնքներից միակն է, որը Ադրբեջանի հետ սահմանամերձ, ականապատ, վտանգավոր տեղանքում գտնվող չմշակվող վարելահողեր, նաեւ սահմանամերձ արոտավայրեր չունի: Ջբոսաշրջային Դիլիջանում զարգացած է հյուրանոցային, ռեստորանային, զբոսաշրջային բիզնեսը: Դիլիջանում տնտեսական ակտիվությունը բարձր է, սակայն Դիլիջան համայնքում սեփական եկամուտների կատարողականը մարզում ամենացածրն է: Տավուշի մարզպետարանից տեղեկացա, որ Իջեւան համայնքի 2023թ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 612,2 մլն դրամ կամ կատարվել է 105.9%-ով, Դիլիջան համայնքի 2023թ. սեփական եկամուտները՝ 556.9 մլն դրամ կամ 94.9%, Բերդ համայնքի 2023թ. սեփական եկամուտները՝ 439.5 մլն դրամ կամ 107.2%, Նոյեմբերյան համայնքի 2023թ սեփական եկամուտները՝ 489.7 մլն դրամ կամ 96.3%:

### ՀԻՆԳԵՐՈՐԴՆ Է ԴԱՏԵԼՈՒ

ԱԺ նախկին պատգամավոր, ՀՅԴ Գերագույն մարմնի նախկին անդամ Սուրեն Մանուկյանը անազատության մեջ է 2022թ. օգոստոսի 11-ից: Ս. Մանուկյանը եւ այլ անձինք մեղադրվում են «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ, գործարար Խաչատուր Քոքոբելյանի հորը առեւանգելու համար: Ս. Մանուկյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը՝այն համարելով շինծու: Ս. Մանուկյանի վերաբերյալ քրեական գործը քննող դատավորը հերթական անգամ անգամ փոխվել է, որոշ դատավորներ ամեն կերպ խուսափում են այդ գործի քննությունը վերցնելուց: Այդ քրեական գործով 5-րդ դատավորը լինելու է Սասուն Մխիթարյանը: Դա նշանակում է, որ քրեական գործով դատաքննությունը սկսվելու է նոր տողից:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## «ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ»

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻՆ

**ՄԱԶԾ-ն Հայաստանի մարզերի գյուղական բնակավայրերում ընդլայնում է իր ծրագրերը՝ տեղի բնակիչներին տալով կայուն եկամտի աղբյուրի հնարավորություն: Գեղարքունիքում, Արմավիրում, Արագածոտնի, Վայոց ձորի, Արարատի, Սյունիքի մարզերում ավելի վաղ իրականացված չրերի, մեղրի արտադրության, գաստրոդարակերի հիմնման ծրագրերի գոհացուցիչ արդյունքները հիմք հանդիսացան աջակցության աշխատանքների աշխարհագրությունն ընդլայնելու, ինչպես նաեւ արտադրությունը դիվերսիֆիկացնելու համար: Վերջին փուլում շեշտը դրվել է կախասնկի արտադրության վրա: 2023 թ.-ին նախաձեռնությունն իրականացրել է ՀՀ Կոտայքի եւ Արագածոտնի մարզերում: 19 հոգի մասնակցել են կախասնկի արտադրության տեսական եւ գործնական դասընթացներին, որի ընթացքում մասնագիտական գիտելիքներ են ձեռք բերել կախասնկերի եւ դրանց աճեցման վերաբերյալ: Հետագայում այդ մասնակիցներից ընտրվել են 10 շահառուներ, որոնք ստացել են նյութական օժանդակություն՝ սարքավորումների եւ կախասնկի դարակների տեսքով, սեփական արտադրություն հիմնելու համար: Ներկայումս բոլոր 10 արտադրությունները լիովին կահավորված են եւ դատրաստ են ամբողջ հզորությամբ գործունեություն ծավալելու համար:**

Հրավիրված ասուլիսում ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի ղեկավար Արման Վալեսյանը նշեց, որ նախորդ տարի նախաձեռնությունը սկսել են իրականացնել նաեւ ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար: 36 մասնակից արդեն մասնակցել է տեսական եւ գործնական դասընթացներին: Ներկայում ընտրվել է 10 շահառու, որոնք շուտով կստանան սարքավորումներ եւ շինանյութ՝ իրենց արտադրությունները հիմնելու համար:

«Տրամադրող աջակցությունը մի քանի ուղղությամբ է: Նախ անցկացվում են մասնագիտական դասընթացներ՝ տեսական եւ գործնական: Մասնակիցները հանձնում են քննություն: Լավագույններն արդեն ստանում են գործնական աջակցություն փոքր բիզնես հիմնելու համար: Մասնավորապես, կախասնկի արտադրության համար տրամադրում ենք խոնավեցման, օդափոխման համակարգ, օդորակիչ, գործընթացն ավտոմատ կառավարելու համակարգ, անհրաժեշտ շինանյութ՝ տարածքի բարելավման համար, ինչպես նաեւ կախասնկի արտադրության 50 հատ պարկ»,-ասաց Արման Վալեսյանը:

ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի փորձագետ Մխիթար Բալայանը նշեց, որ ծրագիրը առաջիկայում նախատեսում են իրականացնել նաեւ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի սահմանամերձ բնակավայրերի բնակիչների եւ համայնքում մշտական բնակություն հաստատած ԼՂ-ից տեղահանված անձանց համար: Ծրագրում ընդգրկված սահմանամերձ բնակավայրերն են Ճամբարակը, Վահանը, Թթուջուրը, Ջիլը, Արտանիշը, Ծափաթաղը:

«Կարող են դիմել բոլոր նրանք, որոնք ունեն ցանկություն, առնվազն 30 քմ մակերեսով փակ տարածք: Մենք կայցելենք բնակավայրերը տեղերում ծրագրի հնարավորություններին ծանոթացնելու համար: Ծրագրի բուն նպատակը լրացուցիչ եկամուտ ապահովելն է: Այդ բնակավայրերում բնակիչները եկամուտի պակասի խնդիր ունեն եւ կախասնկի արտադրության միջոցով կկարողանան այդ բացը լրացնել»,-ասաց Մխիթար Բալայանը:

Ծրագրին մասնակցելու համար կարիք կա լրացնելու հայտը, որը ներկայացված է «Կայուն համայնքների» Facebook-ի էջում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2024 թ.-ի փետրվարի 12-ը:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

## ԱՆՑՈՒԴԱՐՁ

### ԲՈՂՈՔՆԵՐ՝ Wildberries–ԻՑ

Վերջին շրջանում Wildberries-ից օգտվողների կողմից հաճախ է ArmLur.am-ը լսում բացասական կարծիքներ: Խնդիրն այն է, որ այն օգտատերերը, որոնք գրանցված են առցանց առեւտրի հարթակում, իրենց կցված քարտից հաճախակիորեն գումարներ է բռնագանձվում Wildberries-ի կողմից:

«Գումար գցեցի հաշվիս վրա՝ նույն Wildberries-ին կցված «Արդշինբանկ»-ի քարտին, արդեն ուզում էի գործարք անել քարտովս եւ տեսա, որ գումարը չկա. նայեցի, ցույց տվեց, որ գործարք է կատարվել իմ քարտով, բայց ես ոչինչ չէի պատվիրել, անգամ քարտս էին կցված հատվածից հանել»,- պատմում է քաղաքացին, որը հաճախ էր օգտվում վերոնշյալ առցանց առեւտրի հարթակից:

Նա պատմում է, որ եւս մեկ անգամ էլ է նման դեպք եղել.

«Մի անգամ էլ է եղել նման դեպք. 11900 դրամի հագուստ պետք է վճարեմ, վերցնեմ, այդքան էլ գումար կա քարտումս, բայց ինձ նամակ է գալիս անբավարար միջոցներ՝ 21880 դրամ, ու չի լինում վճարել»:

### ԲՌՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԻ ԱՐԳԵԼՔ

Իշխանությունն առաջարկում է առավոտյան 6:00-ից մինչ կեսգիշեր 00:00-ն ընկած ժամանակահատվածում արգելել քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերի ու տեսալսողական հաղորդումների ցուցադրումը:

Նախագիծը հեղինակել են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ու ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը:

ՔՊ-ականները փոփոխություններ են առաջարկում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում. ըստ նախատեսվող փոփոխությունների՝ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաեւ անչափահասների առողջության, մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն:

Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը: Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններ:

Իսկ թե որն է կարգավորող մարմինը, ով է վերահսկելու եթերը, որպեսզի համապատասխան ժամերին քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող հաղորդումներ ու ֆիլմեր չցուցադրվեն, կամ որոնք են քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող եթերի համար սահմանված չափորոշիչը, հստակեցված չէ:

Նախագիծն ընդգրկված է ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի վաղվա նիստի օրակարգում:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 24 պատահար. 1 մարդ զոհվել է, 44-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

## ՍՏՈՒԳԱՅՑԵՐ

Երեւանի Արաբկիր վարչական շրջանի համապատասխան ծառայության աշխատակիցները ակտիվ շրջայցեր եւ ստուգայցեր են իրականացնում՝ տնտեսվարողներին ծանուցելու իրենց օբյեկտներին հարող տարածքների ձնամաքրման աշխատանքներ իրականացնելու պարտականության վերաբերյալ եւ հետեւելու դրա իրականացմանը:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Գեղամ Կարապետյանը պարզաբանեց, որ, Երեւանի քաղաքապետի հանձնարարականով, վարչական ղեկավարի անմիջական հսկողությամբ ու Երեւան քաղաքի ավագանու համապատասխան որոշման շրջանակներում, տնտեսվարողները ձյան տեղումներից անմիջապես հետո պետք է իրականացնեին իրենց օբյեկտների դիմաց գտնվող տարածքի ձնամաքրման աշխատանքներ:

«Արաբկիր վարչական շրջանում կան մոտ 2500 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից 2300-ն արդեն իսկ ծանուցված է: Մոտ 150-ի ծանուցումն արդեն ընթացքում է, իսկ մոտ 50 տնտեսվարողի նկատմամբ արդեն հարուցված են վարչական վարույթներ: Դրանք այն տնտեսվարող սուբյեկտներն են, ովքեր խուսափում են իրենց պարտականություններից»,-տեղեկացրեց Կարապետյանը՝ հավելելով, որ ներկայում համապատասխան ծառայության աշխատակիցները շարունակում են ստուգայցերը:

Վարչական շրջանի ղեկավարի տեղակալի խոսքով՝ իրենց աշխատակիցները յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի առձեռն հանձնել են ծանուցագրեր պարտականությունների վերաբերյալ, իսկ նրանք, ովքեր այդ պահին տարածքում չեն գտնվում, ծանուցվում են Հայփոստի միջոցով:

Մեր զրուցակիցը նշեց, որ ծանուցումից հետո պարտականությունները չկատարելու դեպքում վարչական իրավախախտումների օրենսգրքի համապատասխան հոդվածով տնտեսվարողները ենթարկվում են պատասխանատվության՝ տուգանվելով 15 հազարից 20 հազար դրամի չափով:

## ԿՆՈՐՈԳՎԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ

Համայնք-մասնավոր գործակցությամբ կիիմանորոգվի գեղասահքի նախկին մարզադպրոցը: Այս մասին նշվեց հունվարի 29-ին՝ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական հերթական խորհրդակցության ժամանակ:

Վերակառուցման ծրագրի ավարտից հետո մարզական օջախը կկոչվի Երեւան քաղաքի մենապայքարային մարզաձեւերի բարձրագույն վարպետության մարզադպրոց եւ արդիական պայմաններով բոլոր հավաքականների համար կլինի նոր հարթակ՝ միջազգային մրցաշարերում հաջողություններն ամրապնդելու եւ նոր ձեռքբերումներ գրանցելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

**Հայաստանում ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով ներդրվում է աուդիտի ինստիտուտ: Ճանապարհների անվտանգության աուդիտը դառնում է պարտադիր: Ներկայում Հայաստանի ոչ բոլոր ճանապարհների անվտանգության աուդիտ է իրականացվում: Այն ճանապարհները, որոնք կառուցվում են վարկային միջոցներով, ըստ պայմանագրի պահանջի, պարտադիր աուդիտ իրականացվում է, մյուսների դեպքում՝ ոչ: Օրենսդրական նոր փոփոխությունների համաձայն՝ անվտանգության աուդիտը վերաբերելու է Հայաստանի բոլոր ճանապարհներին՝ անկախ նրանից՝ կառուցվել, հիմնանորոգվել է վարկային, թե պետական միջոցների հաշվին: Մանրամասնելով օրենսդրական փոփոխությունները՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ Արեւհատ Պողոսյանը նշեց, որ կսահմանվեն ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման, ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտի հետ կապված դրույթները:**

«Ճանապարհների շինարարության, հիմնանորոգման, կառուցման ժամանակ պարտադիր պետք է իրականացնենք աուդիտի գործընթաց: Դա նշանակում է, որ նախագծումից սկսած մինչեւ վաղ շահագործման փուլեր մենք աուդիտ ենք իրականացնելու: Աուդիտ ասվածը ենթադրում է ուշադրության կենտրոնում պահել անվտանգության տարրերի ապահովման հարցը՝ օրինակ՝ ճանապարհային նշանը ճիշտ տեղում է, թե ոչ, ճանապարհի թեքությունը որքանով է ճիշտ, անդրադարձ է կատարվելու լուսավորությանը, գծանշումներին: Կատարվելու է ճանապարհային երթեւեկության վերլուծություն, վեր են հանվելու վթարների պատճառները, ըստ դրանց էլ՝ աուդիտի ընթացքում ուշադրություն է դարձվելու ճանապարհների կահավորման, անվտանգության հետ կապված խնդիրներին»,-ասաց Արեւհատ Պողոսյանը:

Օրենքով նախատեսված է, որ միջպետական նշանակության ճանապարհների անվտանգության աուդիտը կիրականացվի 2025 թվականի հուլիսի 1-ից, հանրապետական նշանակության ճանապարհներինը՝ 2026 թվականի հունվարի 1-ից, տեղական նշանակության ճանապարհներինը՝ 2027 թվականի հունվարի 1-ից: Արեւհատ Պողոսյանը նշեց, որ աուդիտի ինստիտուտը ներդրվում է փուլային տարբերակով, իսկ մինչ այդ կանցկացվի գործընթաց աուդիտորների պատրաստման ու հավաստագրման, որակավորման ուղղությամբ:

«Աուդիտ իրականացնողը կարող է լինել եւ՛ անձը, եւ՛ կազմակերպությունը: Սահմանվելու են հստակ չափանիշներ նրանց գործունեության առնչությամբ: Հավաստագրումը ստանալուց հետո արդեն մրցութային ձեւաչափով աուդիտորները կաշխատեն»,-ասաց Արեւհատ Պողոսյանը:

Աուդիտի գործընթացի առանցքում լինելու են նաեւ ճանապարհների հարակից տարածքում գտնվող օբյեկտների հարցը: Կհստակեցվեն ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում, բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում եւ պաշտպանական գոտիներում կառուցապատման պահանջները: Արեւհատ Պողոսյանը նկատեց, որ շատ դեպքերում ճանապարհներին կից տարբեր օբյեկտներ են կառուցվում՝ չպահպանելով կառուցապատման նորմերը, ինչը խոչընդոտ է առաջացնում երթեւեկության համար: Ուշադրության կենտրոնում են լինելու նաեւ հանրապետության թունելները: Սահմանվելու են նոր չափանիշներ: Արեւհատ Պողոսյանը տեղեկացրեց, որ 3 խոշոր՝ Նալբանդի, Դիլիջանի, Պուշկինի լեռնանցքի թունելների առնչությամբ սահմանվելու են խիստ պահանջներ՝ լուսավորություն, վթարային ելքեր, ռիսկերի կառավարում եւ այլն: Այժմ թունելների հիմնանորոգման աշխատանքների նախագծման փուլն է:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԵՐՔՄԱՆ ՊԱՀԱՆՋ

# ՉԵՆՔ ՎՆԱՍՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ

**Հունվարի 11-ին «Ժողովուրդ» օրաթերթը «Հեղափոխական օլիգարխ Նարեկ Նալբանդյանը «Գոլդեն Փելիս» հյուրանոցի գլխավոր տնօրենին աշխատացրել եւ առանց համապատասխան վճարի հեռացրել է աշխատանքից» վերնագրությամբ նյութ էր հրապարակել: Հրապարակումից օրեր անց՝ հունվարի 25-ին, Նարեկ Նալբանդյանի փաստաբան Կարեն Տոնոյանը «Ժողովուրդ» օրաթերթին սույն նյութի առնչությամբ հերքման պահանջ է ներկայացրել հետեւյալ բովանդակությամբ.**

«ՀԵՐՔՈՒՄ. 11.01.2024թ. «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ին պատկանող ArmLur.am կայքը, հղում կատարելով «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ին պատկանող «Ժողովուրդ» օրաթերթին, հրապարակել է «Հեղափոխական օլիգարխ Նարեկ Նալբանդյանը «Գոլդեն Փելիս» հյուրանոցի գլխավոր տնօրենին աշխատացրել եւ առանց համապատասխան վճարի հեռացրել է աշխատանքից» հոդվածը: Հոդվածում, մասնավորապես, նշվել է. «(...) Նարեկ Նալբանդյանը աշխատանքի դիմաց չի վարձատրել նաեւ «Գոլդեն Փելիս» հյուրանոցում ժամանակավոր աշխատանք իրականացնող երիտասարդներին, դեռահասներին: (...) Ստացվում է, որ պարտքերով, փակովի տարբերակով տարբեր պրոբլեմատիկ բիզնեսներ ու գույքեր ձեռք բերած, բայց պետությանը «Գոլդեն Փելիսի» գումարը չվճարած եւ ունեցած պարտքերը հաճախ չմարող Նարեկ Նալբանդյանը, որ մարդկանց աշխատեցնում, բայց չի վճարում, անգամ անչափահասներին է շահագործում եւ իրեն իրավունք է վերապահում ագրեսիվ վարքագիծ դրսեւորել: Չնայած վաղուց հայտնի արտահայտություն է, որ «ճշմարտությունը բարձրաձայնողին չեն ընդունում»: Ոչինչ, կդիմանանք եւ կշարունակենք բացահայտումները»:

ArmLur.am կայքը եւ «Ժողովուրդ» օրաթերթը հերքում են, որ Նարեկ Նալբանդյանը աշխատացրել եւ չի վճարել, շահագործել է «Գոլդեն Փելիս» հյուրանոցում ժամանակավոր աշխատանք իրականացնող երիտասարդներին, դեռահասներին»:

Սիրելի՛ ընթերցողներ, ընդառաջելով փաստաբանի դիմումին՝ մենք հրապարակում ենք տեքստը նաեւ այն պատճառով, որ գործ ունենք անչափահասների հետ, որոնց չենք ցանկանում վնասել:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ՅՈՒՆԵՍԿՕ

# ԿՈՄԻՏԱՍԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ

**ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի միաձայն որոշմամբ՝ Կոմիտաս վարդապետի ստեղծագործությունները գրանցվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում:**

Այս մասին ասուլիսի ընթացքում հայտնեց Կոմիտասի թանգարանի տնօրեն Նիկոլայ Կոստանդյանը՝ նշելով, որ այս իրադարձությունը համընկել է թանգարանի հիմնադրման 9-ամյակի հետ:

«Կոմիտասի ստեղծագործությունները ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային ռեգիստրում գրանցումը շատ պարտավորեցնող է: Սա հնարավոր է եղել թանգարանի, ԿԳՄՍ նախարարության եւ ԱԳ նախարարության հետ 7-8 տարվա մեծ աշխատանքի եւ համագործակցության շնորհիվ»,-ասաց Կոստանդյանը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյան նշեց, որ նմանատիպ գործընթացները պահանջում են տեւական եւ հետեւողական աշխատանք՝ տարբեր գերատեսչությունների ընդգրկմամբ:

«Հուսով եմ, որ սա կլինի լավ առիթ, որպեսզի մենք ինքներս եւս մեկ անգամ վերաարժեւորենք եւ իմաստավորենք այն ժառանգությունը, որ ունենք»,-ասաց նա:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը, շնորհավորելով այս կարեւոր իրադարձության կապակցությամբ, ընդգծեց, որ դեռ 2019 թվականին Կոմիտաս վարդապետի 150-ամյակն ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների ցանկում եւ աշխարհով մեկ մեծ շուքով նշվեց այն:

«Ուզում եմ նշել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում գրանցվում են բացառիկ արժեք ներկայացնող փաստագրական նմուշներ: Այս ծրագրի նպատակն է կանխել աշխարհում գոյություն ունեցող արխիվների, գրադարանների եւ արժեքավոր հավաքածուների կորուստը եւ նպաստել դրանց արդյունավետ պահպանմանն ու տարածմանը»,- նշեց Վահան Կոստանյանը:

Թանգարան-ինստիտուտում քաղաքացիներն արդեն հնարավորություն կունենան Կոմիտասի աշխատասենյակը տեսնել տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ՝ VR ցուցադրությամբ: Նախագիծը հնարավորություն է ստեղծում VR ակնոցի միջոցով մուտք գործել Կոմիտաս վարդապետի՝ Կ. Պոլսում գտնվող բնակարանի աշխատասենյակ: Եռաչափ մոդելավորմամբ ստեղծված վիրտուալ աշխատասենյակի ինտերիերում ներկայացված են Կոմիտասի ռոյալը, ֆիսհարմոնը եւ անձնական այլ իրեր: Ամբողջ ընթացքում հնչում է նաեւ Կոմիտասի ձայնը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, կարեւորելով նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, նշեց՝ շատ ուրախալի է, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը միանալու է այն թանգարանների շարքին, որոնք, օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները, հնարավորություն են տալու այցելուներին, հատկապես՝ երեխաներին, բոլորովին նորովի բացահայտել Կոմիտասի աշխատասենյակը:

«Եվ վստահ եմ, որ սա հատկապես մեր երեխաների համար անկրկնելի փորձառություն կլինի, երբ տեսնեն, օրինակ, այն ստեղները, որոնց վրա նվագել է Կոմիտաս վարդապետը»,-նշեց Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Թանգարանի հոբելյանի կապակցությամբ հանրությանը ներկայացվեց նաեւ «Հազար ու մի երգ» հայկական ժողովրդական երգերի մատենաշարի «Աշխատանքային երգեր» հատորը:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Սուսերամարտի եվրոպական կոնֆեդերացիայի նախագահ, սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի գործադիր մարմնի անդամ Ջեորջիո Սկարցիոյին:

Այս մասին հայտնում են Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունից՝ նշելով, որ հանդիպմանը ներկա են եղել նաեւ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիայի նախագահ Արմեն Գրիգորյանը եւ գործադիր տնօրեն Նատալյա Բունիաթյանը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ողջունելով հյուրին, նշել է, որ ՀՀ կառավարության առաջնահերթություններից են սպորտի զարգացումն ու միջազգայնացումը:

«2023 թվականի դեկտեմբերին հաստատվեց ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների ռազմավարությունը, որում առանձնակի շեշտադրված է միջազգայնացման քաղաքականությունը: Այս ուղղությամբ հասցրել ենք 2023 թվականին ակտիվ քայլեր ձեռնարկել՝ Հայաստանում հաջողությամբ անցկացնելով 5 խոշոր միջազգային առաջնություն: 2024 թվականին Երեւանում կընդունենք ՈՒԵՖԱ Ֆուտզալի չեմպիոնների լիգայի եզրափակիչը, շուտով կանցկացվեն բասկետբոլի աշխարհի առաջնության ընտրական հանդիպումները»,- հանդիպման ընթացքում ասել է նախարարը՝ ընդգծելով, որ միջազգային մրցաշարերի հյուրընկալման քաղաքականությունը լինելու է շարունակական:

Անդրադառնալով Հայաստանում սուսերամարտ մարզաձեւի զարգացմանը՝ նախարարը կարեւորել է Սուսերամարտի եվրոպական կոնֆեդերացիայի կողմից կազմակերպվող մարզչական եւ մրցավարական սեմինարներին Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիայի մարզիչներին եւ մրցավարներին ներգրավելու հարցը:

Այս համատեքստում քննարկվել է սուսերամարտի Եվրոպական կոնֆեդերացիայի տարաբնույթ աշխատանքային խմբերում հայ մասնագետների ընդգրկման հնարավորությունը:

«Սուսերամարտի եվրոպական կոնֆեդերացիայի համար շատ կարեւոր է կապեր հաստատել Հայաստանի հետ, որտեղ սպորտը մեծ ապագա ունի»,- ասել է կոնֆեդերացիայի նախագահ Ջեորջիո Սկարցիոն՝ նշելով, որ տպավորված է 2018 թվականին Հայաստանում անցկացված Եվրոպայի սուսերամարտի մինչեւ 23 տարեկանների առաջնությամբ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն իր հերթին ընդգծել է, որ սուսերամարտը Հայաստանում լուրջ ավանդույթներ ունեցող եւ սիրելի մարզաձեւ է. մեր երկիրը բազմաթիվ չեմպիոններ է ունեցել:

Հանդիպման ավարտին կողմերը հաստատել են համագործակցությունն ամրապնդելու պատրաստակամությունը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ղարիբջանյան փողոց, 35 հասցեում գտնվող 212,45 քմ բնակելի տուն, 53,88 քմ ավտոտնակ եւ 0,0265 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33960000 ՀՀ դրամ :
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Սունդուկյան փողոց, 28 հասցեում գտնվող 153,08 քմ բնակելի տուն, 16,44 քմ աստիճանահարթակ, 1,44 քմ աստիճաններ եւ 0,08887 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Յան Ռայնիսի փողոց, 15 շենք, 16 հասցեում գտնվող 64,1 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 31860000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 15.02.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 15.03.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

*● Փետրվարի 2-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Բարի լույս, հրեշտակներս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:**

*Լիլիթ Մարկոսյան (47 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Լ. Մարկոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:

## ՀՈԳԵՎՈՐ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ նորածին երեխաների ծնվելուց հետո պարտադիր է արդյոք քառասունք պահել, թե ոչ:**

*Անժելա Մանուկյան (28 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ըստ բնական օրինաչափության՝ ծնված երեխան մտնում է կյանքի նոր միջավայր, որը խիստ տարբեր է նրա նախնական՝ մայրական ներքին միջավայրից: Եվ նախքան իրական կյանք մտնելը երեխան պետք է հարմարվի կյանքի այս նոր միջավայրին՝ օդին, լույսին, ձայնին: Քառասունքի կանոնը մաքրության օրենք է, որ վերաբերում է նախ երեխայի մայրիկին, ապա՝ երեխային: Այցելել կարելի է միայն, իհարկե, հիգիենիկ կանոնները պահպանելով, որպեսզի չվարակեն մոր եւ երեխայի թույլ օրգանիզմները: Երեխային տեսակցության գալն արգելելը քրիստոնեության հետ կապ չունի: Երեխան ծննդյան առաջին իսկ օրից պետք է սկսի սովորել կյանքին: Նա պետք է ունենա բացօթյա զբոսանքներ, ոչ թե տնային կալանքի տակ գտնվի:

*Արարատյան հայրապետական թեմ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նկատենք, որ եկեղեցին երեխայի քառասունքի հատուկ կարգ ունի, համաձայն որի՝ ծննդյան օրվանից հաշված քառասունքերորդ օրը ծնողները երեխայի հետ միասին գալիս են եկեղեցի եւ օրհնություն ստանում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում ընթացող աշխարհի գավաթի խաղարկությունում Հայաստանի հավաքականի անդամներ Բենիկ Խլղաթյանը եւ Էլմիրա Կարապետյանը «10 մետր ատրճանակ միքս» մրցաձեւում դուրս էին եկել եզրափակիչ, սակայն դարձել են մրցաշարի արծաթե մեդալակիրներ:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| Մարզ | Գիշեր | Ցերեկ |
|---|---|---|
| Շիրակ | - 14 - 19 | - 4 - 7 |
| Կոտայքի լեռներ | - 14 - 18 | - 4 - 7 |
| Կոտայքի նախալեռներ | - 5 - 7 | - 1 + 1 |
| Գեղարքունիք | - 12 - 17 | - 3 - 6 |
| Լոռի | - 9 - 13 | - 0 - 3 |
| Տավուշ | - 3 - 8 | - 1 + 3 |
| Արագածոտնի լեռներ | - 14 - 18 | - 4 - 7 |
| Արագածոտնի նախալեռներ | - 6 - 8 | - 1 + 2 |

| Մարզ | Գիշեր | Ցերեկ |
|---|---|---|
| Արարատ | - 4 - 7 | + 2 + 3 |
| Արմավիր | - 5 - 7 | + 2 + 3 |
| Վայոց ձորի լեռներ | - 13 - 15 | - 3 - 4 |
| Վայոց ձորի նախալեռներ | - 4 - 7 | + 2 + 4 |
| Սյունիքի հովիտներ | - 1 - 4 | + 1 + 3 |
| Սյունիքի նախալեռներ | - 8 - 10 | - 2 - 4 |
| ԼՂՀ | - 7 - 9 | - 2 - 3 |
| Երեւան | 0 - 2 | 0 - 2 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*